ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 սեպտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

125
(2791)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԶՊԵՏԸ ՕՐ ՕՐԻ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականին: Ինչպես գիտենք, Նիկոլ Փաշինյանի աշխատելաոճի մեջ է մտնում իշխանության բերել նրանց, ում ինքը հեշտ կղեկավարի եւ, վարչապետ լինելուց բացի, խամաճիկի պես կպարեցնի տարբեր դերերում:

Հենց այս պատճառով էլ նախկինում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության Տավուշի մարզի տարածքային կենտրոնի առաջատար մասնագետ Ղալումյանին Փաշինյանն ընտրեց՝ որպես մարզպետ:

Ղալումյանը նաեւ քաղաքական ուժի այն ընտրյալն է, որը եւս նախկինում բանկային համակարգի աշխատակից է եղել, ինչպես պաշտոնյաներից շատերը:

Ղալումյանը, ըստ 2022 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի, հայտարարագրել է միանձնյա սեփականությամբ մեկ հողամաս եւ բնակարան բազմաբնակարան շենքում, որոնք եղել են նվիրատվություններ 2008 թվականին Իջեւան քաղաքում: Միանձնյա սեփականությամբ մի բնակարան էլ հայտարարագրել է 2001 թվականին, սակայն ձեռք բերման եղանակը հստակ նշված չէ: Ղալումյանը 2010 թվականին Գանձաքարում գնել է արտադրական նշանակության շինություն՝ համատեղ սեփականությամբ:

2022 թվականին մարզպետը բնակարան է ձեռք բերել Երեւանի Դավթաշեն վարչական շրջանում, որն արժե 18 մլն 150 հազար դրամ. բնակարանը ձեռք է բերվել հիփոթեքով «Լավ-Սար» ՍՊԸ-ից:

Իսկ նախկինում ունեցած բնակարաններից մեկը վաճառել է 13 մլն 100 հազարով Ջանիկ Խառատյանին եւ Աննա Սարիբեկյանին:

2021 թվականին նա գնել է նոր մեքենա՝ 2007 թվականի արտադրության, Mitsubishi մակնիշի:

Նրա բաժնային արժեթղթերը եւ այլ ներդրումները կազմել են 1 մլն 313 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները կազմել են 7 մլն 351 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 13 մլն 100 հազար եւ 15 հազար դոլար: Մարզպետ Ղալումյանը տարեկան ստացել է 28 մլն 623 հազար դրամ եկամուտ, որից 12 մլն 879 հազարը աշխատանքի վարձատրություն է Տավուշի մարզի պետական կառավարման հիմնարկից, նա ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 1 մլն 606 հազար դրամ գումար՝ բնակարանի հիփոթեքը մարելու համար:

Նա վարկի մարմանն ուղղել է 2 մլն 163 հազար դրամ:

Հիշեցնենք նաեւ, որ իշխանության գալով՝ ՔՊ-ականները բացառում էին քավոր-սանիկ, խնամի-ծանոթ-բարեկամ կապով աշխատանքի ընդունումը: Անցան տարիներ, եւ բոլոր պաշտոններում խնամիներ են, քավոր-սանիկներ են, ինչպես Ղալումյանի դեպքում: Հայկ Ղալումյանը, Նիկոլ Փաշինյանի հետ ունենալով քավորսանիկական կապ, դարձավ մարզպետ, իսկ եղբայրը մտավ Ազգային ժողով եւ դարձավ ՔՊ-ին պետք եկած ժամանակ պաշտպանող մունետիկ-պատգամավոր:

Հայրենի գործադիրում լարված եւ անհանգիստ իրավիճակ է: Նիկոլ Փաշինյանը դժգոհ է նախարարներից, եւ առաջիկայում մեծ թվով պաշտոնանկություններ են սպասվում կառավարությունում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ թիրախում ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը եւ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանն են, որոնք Երեւանի ավագանու ընտրություններից հետո հրաժեշտ կտան իրենց պաշտոններին: Ըստ գործադիրում շրջանառվող տեղեկությունների՝ Նիկոլ Փաշինյանը, սակայն, այսքանով չի սահմանափակվելու. նախատեսվում է, որ իրենց պաշտոններին հրաժեշտ են տալու նաեւ ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը եւ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը: Ահա, այս պաշտոնանկությունների մասին թեժ խոսակցություններով պայմանավորված, կառավարությունում իրավիճակը շատ լարված է, նախարարները շունչները պահած սպասում են, թե ով է Փաշինյանի հաջորդ թիրախը, ով է հրաժեշտ տալու իր պաշտոնին: Նիկոլ Փաշինյանը, սակայն, դեռ չի շտապում. սպասում է, որ ավագանու ընտրությունները անցկացնեն, դրանից հետո նոր միայն սկսի «չիստկան» կառավարությունում: Բացի սա, դեռ պաշտոնանկ արվող նախարարներին փոխարինողների հարցը լուծված չէ. գաղտնիք չէ, որ Փաշինյանը հիմա գրեթե իր բոլոր թիմակիցների հետ լարված է, ոչ մեկին չի վստահում, դրա համար էլ փոխարինող չի գտնում առաջիկայում պաշտոնանկ արվող նախարարներին:

Կառավարության վաղվա նիստում այս պահի դրությամբ ընդգրկված է 30 հարց: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հարցերի մեծ մասը կրկին չզեկուցվող են: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը երեք նախագիծ պետք է զեկուցի վաղը վարչապետին, եւ երեքն էլ գաղտնի են լինելու: Բացի այդ, վաղը նախագիծ կընդունվի՝ հոկտեմբերի մեկից կրկին վարժական հավաքներ հայտարարելու մասին: Մյուս կողմից՝ փոխհատուցում կստանան այն քաղաքացիները, որոնց մեքենաները վնասվել են 44-օրյա պատերազմի ժամանակ: Մասնավորապես, 88 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխհատուցում կտրամադրվի՝ ընդհանուր 139 մլն 940 հազար դրամի չափով (88 տրանսպորտային միջոցներից 11-ը ոչնչացվել կամ մնացել է հակառակորդի դաշտում եւ առկա չէ, 77-ը վնասված վիճակով վերադարձվել են սեփականատերերին եւ կարող են օգտագործվել նպատակային նշանակությանը համապատասխան): Նշենք, որ պատերազմից անցել է 3 տարի, եւ կառավարությունը նոր փորձում է լուծել տուժած քաղաքացիների հարցերը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունները որոշել են Արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող քրեակատարողական ծառայության պետի նշանակման հարցը լուծել քաղաքապետի ընտրություններից հետո: Մեզ հասած լուրերի համաձայն՝ քաղաքական իշխանությունները քննարկել են, որ ընտրություններից հետո, երբ նախարար Գրիգոր Մինասյանն էլ ազատվի պաշտոնից, հետո նոր նախարարի հետ միասին կնշանակեն նաեւ նոր ՔԿ ծառայության պետ: Իսկ մինչ այդ բանտապետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակված Ամբակում Գրիգորյանը, որ ՔԿ ծառայության նախկին պետ Սերգեյ Ատոմյանի առաջին տեղակալն էր:

ԶՐՈՒՅՑ

ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՌԴ-Ի

Հայաստանը եւ ԱՄՆ-ն սեպտեմբերի 11-20-ը Հայաստանում կանցկացնեն «ԱՐԾԻՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ-2023» հայ-ամերիկյան համատեղ զորավարժությունը:

Զորավարժությունը ենթադրում է խաղաղապահ առաջադրանքների ընթացքում հակամարտող կողմերի միջեւ կայունացման գործողություններ:

Ի՞նչ կտան հայ-ամերիկյան համատեղ զորավարժությունները, արդյոք դրանք կնպաստե՞ն երկու երկրների միջեւ ռազմական համագործակցությանը. այս հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանի հետ:

-Խոսքը խաղաղապահ զորքերի զորավարժության մասին է, այսինքն՝ այն տիպի սցենարներ, որոնք բնորոշ են, օրինակ, ոստիկանության զորքերին՝ որեւէ ոստիկանական օպերացիա կազմակերպելու համար: Այսինքն՝ եթե նույնիսկ ոմանք քարոզում են սա որպես ինչ-որ հայ-ամերիկյան լայնածավալ ռազմական համագործակցության ավետաբեր զորավարժություն, դա այդպես չէ: Նախկինում էլ են եղել զորավարժություններ, վարժանքներ, որոնց մասնակցել են մեր խաղաղապահները:

-Շատերը նաեւ սա հակադրում են ՀԱՊԿ զորավարժություններին՝ ասելով, որ, տեսե՛ք, հայերը հրաժարվում են մասնակցել այս զորավարժություններին, բայց, դրա փոխարեն, Միացյալ Նահանգների հետ են համատեղ զորավարժություններ անում: Այս մասին ի՞նչ կասեք:

-Դա մոտավորապես նման է նրան, որ, օրինակ, վարունգը համեմատեք տաբուրետի հետ: Այսինքն՝ մեկը խաղաղապահ զորքերի զորավարժություն է, մյուսը՝ լրիվ այլ բան: ՀԱՊԿ-ը ենթադրաբար պետք է ապահովեր ընդհանրապես անվտանգային համակարգը Հայաստանի, իսկ Միացյալ Նահանգները նման պարտավորություններ չունի, եւ, ավելին, դրա մասին բացահայտում են՝ ասելով, որ Հայաստանը իր անվտանգային հարցերը պետք է լուծի՝ բանակցելով Թուրքիայի հետ:

-Ի՞նչ եք կարծում, այս զորավարժությունները որեւէ կերպ կազդե՞ն Ռուսաստանի հետ հարաբերությունների վրա, ինչ-որ դժգոհություններ ռուսական կողմից կա՞ն կամ կլինե՞ն:

-Խնդիրն այն է, որ ցուցադրաբար գործողություններ են արվում. նախկինում Հայաստանը եւ ՆԱՏՕ-ի հետ է զորավարժություններ արել, եւ՛ առանձին ամերիկյան համատեղ ինչ-որ գործողություններ են եղել, բայց այդ ամենը չի արվել ցուցադրաբար՝ ի հակադրումն Ռուսաստանի: Այժմ ամեն ինչ հենց այդպես է արվում, օրինակ՝ նույն Ուկրաինային մարդասիրական օգնություն տրամադրելու ֆոնին:

-Իսկ սա որեւէ կերպ կնպաստի՞ հայ-ամերիկյան ռազմական համագործակցությանը, թե՞ առանձնապես նշանակություն չի ունենա. ի՞նչ եք կարծում:

-Սա բավական փոքր բան է. կարելի է խոսել հայ-ամերիկյան համագործակցության մասին, եթե լինեին ինչ-որ երկարաժամկետ պլաններ, իմանայինք, որ այդպիսի պլաններ կան, թե չէ հիմա նման փոքր բաները որպես մեծ համագործակցություն են ներկայացվում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՕՐԱԿԱՐԳ

ՍԿԱՆԴԱԼ՝ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻՆ ⇨

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավն առանց միջադեպերի չի անցնում:

Երեկ իշխող ուժը քարոզարշավ էր իրականացնում Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհի հրապարակում: «Ժողովուրդ» օրաթերթը ֆիքսել է, թե ինչպես է քարոզարշավի ժամանակ քաղաքացիներից մեկը փորձում մոտենալ «կարկառուն» ՔՊ-ական, Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանին, սակայն աշխատակիցներն անմիջապես հեռացնում են քաղաքացուն. հավանաբար վախենում են, որ քաղաքացին կվնասի Սարգսյանին:

Ըստ տեղեկությունների՝ մինչեւ այդ քաղաքացու ու Սարգսյանի միջեւ լեզվակռիվ է եղել, եւ վերջինս փորձել է Սարգսյանի հետ «առանձնանալ», ինչը նկատել են ՔՊ-ականները ու «լիկվիդացրել են» քաղաքացուն:

Նշենք, որ Գարիկ Սարգսյանն ամենասկանդալային ՔՊ-ականներից է, որը մտադիր էր Արարատ մարզում կոկորդիլոս բուծելու ծրագիր իրականացնել ու պարբերաբար հպարտանում էր դրանով:

Թե ինչով են պայմանավորված իշխանության այսչափ վախերը, պարզ չէ, բայց ակնհայտ է, որ ՔՊ-ականները շատ անհանգստություններ ունեն:

Ուշագրավ է, որ ՔՊ-ի քարոզարշավները գրեթե ամեն օր բազմաթիվ միջադեպերով են ուղեկցվում. իշխանականները հաճախ են տարբեր վարչական շրջաններում երեւանցիների բացասական եւ կոպիտ վերաբերմունքին արժանանում: Երեկ անգամ քաղաքացիներից մեկը ջուր էր շփել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի վրա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը «ԱԶԵՐԹԱՋ» գործակալությանը եւ հունգարական Magyar Demokrata պարբերականին տված հարցազրույցում հերթական անգամ պահանջներ է ներկայացրել Հայաստանին, ընդ որում՝ դա մատուցել է խաղաղության հաստատման պատրաստակամության անվան տակ:

Միեւնույն ժամանակ, Բայրամովը Հայաստանին մեղադրել է ժամանակ առ ժամանակ «հողի վրա սադրանքներ կատարելու» համար: Նրա խոսքով՝ «տարածաշրջանում լարվածության եւ պայթյունավտանգության լուրջ աղբյուր է Ադրբեջանի տարածքում հայկական զինված կազմավորումների (մոտ 10 հազար մարդ) ցայսօր պահպանվող ներկայությունը»: Բայրամովը հայտարարել է, որ այդ ուժերին պահում է Հայաստանը, որը ֆինանսավորում է նրանց իր պետական բյուջեից:

«Այդ կազմավորումների անձնակազմի մի մասը Հայաստանի Զինված ուժերի զինվորական անձնակազմն է: Կան սա հաստատող բազմաթիվ ապացույցներ»,- հավաստիացրել է Ադրբեջանի ԱԳՆ ղեկավարը:

Ո՞Վ Է ՀԱՋՈՐԴԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի ԱԺ բոլոր խմբակցությունները, բացառությամբ Սամվել Բաբայանի «Միասնական հայրենիք»-ի, ԱՀ նախագահի պաշտոնում առաջադրել են նորանշանակ պետնախարար Սամվել Շահրամանյանի թեկնածությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Միասնական հայրենիք»-ը կտրուկ դեմ է արտահայտվել Սամվել Շահրամանյանի թեկնածությանը, քանի որ մտադիր են Սամվել Բաբայանի թեկնածությունն առաջադրել:

Ավելին՝ «Միասնական հայրենիքը» հորդորել է բոյկոտել նախագահի ընտրության հարցով ԱԺ նիստը, որը պետք է տեղի ունենա սեպտեմբերի 8-ին: Հավելենք, որ, ըստ ԱՀ Սահմանադրության, նախագահը խորհրդարանում ընտրվում է պատգամավորների 2/3 ձայներով: Առաջին փուլով նախագահ չընտրելու դեպքում ամենաշատ ձայնը հավաքած երկու թեկնածուները կանցնեն երկրորդ փուլ. այս դեպքում արդեն ընտրությունն արվում է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀԱՐԿԵՐԸ ՉԵՆ ՎՃԱՐՈՒՄ

Azdarar.am կայքից տեղեկանում ենք, որ Երեւանի ավագանու ընտրություններում «Ազգային առաջընթաց» կուսակցության ընտրացուցակը գլխավորող, քարոզարշավին, իսկ դրանից առաջ բեմերում օրինականությունից եւ կոռուպցիայից խոսող Հայկ Մարությանի ներկայիս թիմակիցները պարբերաբար թաքցրել կամ չեն վճարել հարկերը: Ընդ որում՝ այդ ամենն արել են նաեւ այն ժամանակ, երբ Երեւանի քաղաքապետը Մարությանն էր: Արդյունքում նրանք տուգանվել են ՊԵԿ-ի կողմից: Օրինակ՝ ավագանու ընտրացուցակի 10-րդ հորիզոնականում տեղավորված Արամ Թորոսյանը, որ «ԱՍԴԳ» ՍՊԸ տնօրենն է, 2020թ. տուգանվել է այն բանի համար, որ դրան նախորդած տարում չի վճարել 915 հազար դրամի չափով հարկեր: Մեկ այլ դեպքում էլ 2021թ. հունվարին նա ծանուցվել է 1 մլն 882 հազար դրամի չկատարված հարկային պարտավորություններ ունենալու մասին: Ընդ որում՝ նա չի վճարել ոչ միայն ԱԱՀ եւ ոչ ռեզիդենտի շահութահարկ, այլեւ սոցիալական վճարներ: Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ 2021թ. ընկերությունն ունեցել է հետեւյալ պարտավորությունները՝

- ԱԱՀ -55971 դրամ, ապառք՝ 55860 դրամ, տույժ՝ 111 դրամ, որն առաջացել է 2020թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկից,
- Ոչ ռեզիդենտի շահութահարկ-12101 դրամ, ապառք՝ 12077 դրամ, տույժ՝ 24 դրամ, որն առաջացել է 2020թ. շահութահարկի 4-րդ եռամսյակային կանխավճարից,
- Սոցիալական վճար-191156 դրամ, ապառք՝ 190775 դրամ, տույժ՝ 381 դրամ, որն առաջացել է 2020թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկից,
- Եկամտային հարկ-1623438 դրամ, ապառք՝ 1620198 դրամ, տույժ՝ 3240 դրամ, որն առաջացել է 2020թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկից:

Նշենք, որ այս ընկերությունը զբաղվում է ֆիլմարտադրությամբ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹԱՆԴԻԼՅԱՆԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

«Ապրելու երկիր» կուսակցության քաղաքապետի թեկնածու Մանե Թանդիլյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ, ըստ արդեն 2 շաբաթ տեւող նախընտրական քարոզարշավի արդյունքների, քաղաքացիների մեծ մասը չի պատրաստվում մասնակցել ընտրություններին: Հարցին, թե վախ կա արդյոք, որ չմասնակցության դեպքում կհաղթի իշխող կուսակցության թեկնածուն, Թանդիլյանը պատասխանեց.

«Ոչ թե վախ, այլ հենց իշխանություն ընտրող զանգվածը թվաքանակ է, եւ մենք այդ թվաքանակին ծանոթ ենք, եւ չմասնակցելով՝ մարդիկ գիտակցաբար կամ անգիտակցաբար ընտրում են այս իշխանություններին: Մենք դրա համար ենք կարեւորում յուրաքանչյուրի մասնակցությունը: Սա լինելու են ճակատագրական ընտրություններ, նրանց մասնակցությունը պարտադիր է. ում ուզում են՝ ընտրեն: Ես կոնկրետ ուժի մասին էլ չեմ խոսում, միայն պետք է գնալ եւ ընտրել: Եթե դուք դժգոհում եք եւ չեք գնում, դժգոհը ընդդիմադիր ձայն է, իշխանության ձայն չէ, եւ այդ դժգոհ հատվածի չգնալով՝ ընտրում են ՔՊ-ին՝ իշխանությանը: Հետեւաբար ահազանգով եմ ասում, որ անպայման գնան եւ մասնակցեն ընտրությունների, եւ ում ուզում են՝ ընտրեն: Անհնարին է՝ չտեսնեն այն առաջարկը կամ նախագիծը, որն իրենք ուզում են, բայց անտարբերությունը վատագույնն է, որ կարող են անել մեր հայրենակիցները:

Մենե Թանդիլյանը մինչ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցը պարբերաբար նշել է, որ Երեւանում իշխանափոխություն անելուց հետո նրանք պատրաստ են իշխանափոխություն անել ամբողջ Հայաստանում: Մանե Թանդիլյանն ինքն այս մասին խոսեց՝ ասելով, որ մի քանի համայնքներում տարած հաղթանակները, որոնք ՔՊ-ի նկատմամբ գրանցվել են մեկ ձայն ավել սկզբունքով, դառնալու են չափանիշ: Ըստ Թանդիլյանի՝ համայնքներում տարած հաղթանակները կարեւոր են լինելու այս իշխանության գործունեության կազմաքանդման համար: Նա կարծում է, որ իշխանության բուրգը պետք է քանդել, եւ այդ ճանապարհը սկսվելու է համայնքներից: Այս ընտրություններին, Թանդիլյանը կարծում է, որ կհամագործակցեն նրանց հետ, ովքեր իրենց դիրքորոշմամբ դեմ կլինեն ՔՊ-ին: Նա չբացառեց նաեւ Հայկ Մարությանի հետ հավանական համագործակցությունը, սակայն նշեց, որ ամեն ինչ պարզ կլինի միայն սեպտեմբերի 17-ից հետո:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՈՒՐՈՒԳՎԱՅԻՑ՝ Ի ՍԱՏԱՐ ԱՐՑԱԽԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Ուրուգվայի նախորդ իշխող քաղաքական ուժը՝ «Լայն ճակատ» կուսակցությունը, հանդես է եկել Արցախին սատարող հայտարարությամբ:

«Լայն ճակատ» կուսակցությունը նախ արձանագրել է, որ 2022 թվականի դեկտեմբերից ի վեր Արցախը Հայաստանին կապող Լաչինի միջանցքն արգելափակված է, ինչի հետեւանքով 120,000 մարդ ապրում է մեկուսացված, լայնածավալ եւ արյունալի հումանիտար ճգնաժամի, գոյատեւման համար անհրաժեշտ հիմնական պարագաների՝ սննդի, դեղորայքի գրեթե լիակատար բացակայության պայմաններում:

Նշենք, որ հայտարարությունը փաստում է, որ Ադրբեջանի կողմից ագրեսիայի գործողությունները հանդիսանում են միջազգային իրավունքի եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի զինադադարի եռակողմ համաձայնագրի, «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ պատժելու մասին» կոնվենցիայի կոպիտ խախտում, Արդարադատության միջազգային դատարանի 2023 թվականի փետրվարի 22-ի որոշման դրույթների արհամարհում, որը սահմանում է, որ Ադրբեջանը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ երաշխավորելու մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքի երկայնքով՝ երկու ուղղություններով: Հայտարարության հեղինակները վկայակոչել են իրավիճակի հանգուցալուծման հետ կապված ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բացարձակ եւ անվիճելի մեծամասնության պահանջները:

Հայտարարության մեջ եւս մեկ անգամ փաստվում է այն իրողությունը, որ Արդարադատության միջազգային դատարանի նախկին դատախազ, դոկտոր Լուիս Մորենո Օկամպոն փորձագիտական եզրակացության միջոցով 2023 թվականի օգոստոսի 7-ի ամփոփ զեկույցում որոշում է կայացրել հարցի վերաբերյալ՝ դատապարտելով տեղի ունեցածը եւ այն որակելով որպես ցեղասպանություն Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ: Լուիս Մորենո Օկամպոն վկայակոչել է «Ցեղասպանության մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի «գ» կետը, որը վերաբերում է էթնիկ խմբի կենսապայմանները միտումնավոր կերպով խաթարելուն՝ նրա ֆիզիկական ոչնչացումը հրահրելու համար: Օկամպոն նշել է, որ, առանց կտրուկ միջամտության, հայերի էթնիկ խումբը Լեռնային Ղարաբաղում մի քանի շաբաթից կվերանա:

Հավելենք, որ նշվում է, որ Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության Սենատը 2022 թվականի դեկտեմբերի 20-ին միաձայն հավանություն է տվել հռչակագրին, որում կոչ է արվում Ադրբեջանին կատարել իր միջազգային պարտավորությունները եւ ապահովել ազատ տեղաշարժ Արցախը Հայաստանի հետ կապող միջանցքով:

««Լայն Ճակատ» կուսակցությունը դատապարտում է ռազմական ագրեսիան եւ ցեղասպանությունը, որը դրսեւորվում է Ադրբեջանի կողմից Արցախի եւ միջազգայնորեն ճանաչված Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ՝ հակասելով միջազգային իրավունքին, իր համերաշխությունն է հայտնում Արցախի ժողովրդին Ադրբեջանի կողմից իրականացվող անօրինական շրջափակման պայմաններում, ինչը միջազգային եւ մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտում է, վերահաստատում է միջազգային իրավունքին համահունչ Արցախի տարածքում հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու հանձնառությունը եւ հորդորում է կառավարությանը գործել այդ ուղղությամբ՝ հիմնվելով արտաքին քաղաքականության մեջ Հայաստանի ժողովրդի հետ Ուրուգվայի համերաշխության ավանդույթի վրա»,- ասված է հայտարարության մեջ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԹՈՒՆԵԼԸ ՓԱԿ Է

Փրկարար ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում ավտոճանապարհներն անցանելի են:

Հիմնանորոգման աշխատանքներով պայմանավորված՝ Ալավերդի-Սանահին-Սարահարթ ճանապարհահատվածին գործում են երթեւեկության սահմանափակումներ:

Սեպտեմբերի 6-8-ը՝ ժամը 09:00-ից 18:00-ն, Դիլիջանի թունելը, ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքներով պայմանավորված, ժամանակավորապես փակ է լինելու. գործում է Ծովագյուղ-Սեմյոնովկա այլընտրանքային ավտոճանապարհը:

ՊԵՏԴԵՊԻ ԿՈՉԸ

ԱՄՆ Պետդեպարտամենտի փոխխոսնակ Վեդանտ Պատելը հայտարարել է, որ խորապես անհանգստացած են Լեռնային Ղարաբաղում մարդասիրական պայմանների վատթարացմամբ, որը հետեւանքն է սննդամթերքի, դեղորայքի եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների շարունակական արգելափակման:

«ԱՄՆ-ն վերջին մի քանի շաբաթների ընթացքում աշխատել է կողմերի հետ, որպեսզի հումանիտար օգնություն հասնի Լեռնային Ղարաբաղի բնակչությանը, եւ մենք կրկնում ենք մեր կոչը՝ անհապաղ վերաբացել Լաչինի միջանցքը մարդասիրական, առեւտրային եւ ուղեւորափոխադրումների համար»,- ասել է Պատելը:

ԼՂ ՊՆ–Ն ՀԵՐՔՈՒՄ Է

Երեկ Ադրբեջանի ՊՆ-ն հաղորդագրություն տարածեց այն մասին, թե, իբր, ՊԲ ստորաբաժանումները սեպտեմբերի 6-ին ամրաշինական աշխատանքներ են կատարել Բերձորի ուղղությամբ, ինչն, իբր թե, կանխվել է ադրբեջանական ԶՈՒ գործողությունների արդյունքում:

«Ժողովուրդ» օրաթերթը ԼՂ ՊՆ մամուլի ծառայությունից տեղեկանում է, որ սա հերթական ապատեղեկատվությունն է ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից:

ԵՐԵՔ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Ուկրաինայի պաշտպանության նախարարի երեք տեղակալները՝ Վլադիմիր Գավրիլովը, Վիտալի Դեյնեգան եւ Անդրեյ Շեւչենկոն, հրաժարական են տվել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Ուկրաինայի խորհրդարանի պատգամավոր Ալեքսեյ Գոնչարենկոյի հայտարարությունից:

«Փոխնախարարներ Գավրիլովը, Դեյնեգան եւ Շեւչենկոն հրաժարականի դիմում են գրել»,- նշել է Գոնչարենկոն իր թելեգրամյան ալիքում: Դեյնեգան ՊՆ-ում ղեկավարում էր թվային զարգացման հարցերը, Շեւչենկոն՝ եվրոպական ինտեգրման:

Նախօրեին Գերագույն ռադան հավանություն էր տվել պաշտպանության նախարար Ալեքսեյ Ռեզնիկովի հրաժարականին: Սպասվում է, որ այսօր Ուկրաինայի խորհրդարանը կդիտարկի Ուկրաինայի նախագահի առաջարկած՝ Պետական գույքի հիմնադրամի նախկին ղեկավար Ռուստեմ Ումերովի թեկնածությունն այդ պաշտոնի համար:

ՀԱՐՈՒՑՎԵՑ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՈՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

2008-2015 թվականներին Աբովյան համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Կ.Գ.-ն, տեղյակ լինելով օրենսդրական արգելքի մասին (պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը՝ զբոսայգիները, պուրակները, այգիներն ու ընդհանուր օգտագործման այլ տարածքները չեն կարող սեփականության իրավունքով փոխանցվել քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց), իր լիազորություններն օգտագործել է պետական եւ ծառայողական շահերին հակառակ, խախտել մի շարք իրավական ակտերի պահանջներն ու օտարել հողատարածքները:

Մասնավորապես, Աբովյան համայնքի նախկին ղեկավար Կ.Գ.-ն խախտել է Հողային օրենսգրքի 60-րդ հոդված պահանջները (օտարման ոչ ենթակա հողատարածքներ), անտեսել Աբովյան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատելու վերաբերյալ Կառավարության որոշման պահանջները եւ Ռոսիա փողոցի 1/4 հասցեում գտնվող զբոսայգու 3 քմ մակերեսով հողատարածքը 1 մլն 858 հազար 100 դրամով օտարել է մարզի դատախազի նախկին տեղակալի քրոջը՝ Ա.Գ.-ին:

Վարույթով նաեւ տվյալներ են ձեռք բերվել, որ Կ.Գ.-ն, տեղյակ լինելով, որ Աբովյան քաղաքի Կոտայքի 1/80 հասցեում գտնվող 2020 քմ մակերեսով օտարման ոչ ենթակա հաղամասը հանդիսանում է պատմության եւ մշակույթի արժեք, գույքն օտարել է ինքն իրեն: Օտարումից հետո իր հետ փոխկապակցված անձանց՝ մոր՝ Ն.Ք.-ի, հորեղբոր որդիներ՝ Օ.Գ.-ի եւ Ս.Գ.-ի, աներոջ հորեղբորորդի՝ Ս.Ծ.-ի հետ նախնական համաձայնությամբ եւ համակատարմամբ, օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը:

Կ.Գ.-ն, խախտելով Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջները, մասնավորեցման ոչ ենթակա ջրավազանն ու դրա պահպանման-սպասարկման համար առանձնացված հողամասն (համապատասխանաբար՝ 0 քմ եւ 1836.53 քմ) իր օգնական Մ.Հ.-ի օժանդակությամբ օտարել է այդ ժամանակ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Մ.Մ.-ին:

Կ.Գ.-ն, իր օգնական Մ.Հ.-ի եւ համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Ս.Խ.-ի օժանդակությամբ, քաղաքացի Կ.Կ.-ին է օտարել մասնավորեցման ոչ ենթակա 5 քմ մակերեսով զբոսայգին:

Կ.Գ.-ն իր օգնական Մ.Հ.-ի, համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, տեղեկատվության եւ գործավարության բաժնի պետ Ա.Ջ.-ի եւ «Գիս-Արտ» ՍՊԸ աշխատակից Վ.Վ.-ի առերեւույթ հանցավոր գործողությունների արդյունքում Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող եւ օտարման ոչ ենթակա՝ Աբովյան համայնքի գլխավոր հատակագծում որպես ճանապարհ եւ մայթ նշված հողատարածքը օտարել է ինքն իրեն: Այնուհետեւ Կ.Գ.-ն փոխել է շուրջ 84 մլն 253 հազար 50 դրամ կադաստրային արժեքով 9 հա արտադրական եւ արդյունաբերության համար նախատեսված պահուստային տարածքների նշանակությունը գյուղատնտեսականի եւ ձեւական առուվաճառքի պայմանագրերով 400 հազար 500 դրամով օտարել է իր ընկերոջը՝ Մ.Մ.-ին՝ համայնքին պատճառելով 83 մլն 852 հազար 550 դրամի գույքային վնաս:

Վերոշարադրյալի հիման վրա՝ դատախազը սեփական նախաձեռնությամբ 2023 թվականի սեպտեմբերի 6-ին Կ.Գ.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում:

Առերեւույթ կատարված հանցավոր արարքների արդյունքում համայնքին պատճառվել է 537 մլն 802 հազար 150 դրամի գույքային վնաս, որից 474 մլն 949 հազար 600 դրամը նախաքննության ընթացքում վերականգնվել է:

Համայնքին պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնելու ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվում:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԿԵՂԾ ԴԻՊԼՈՄ՝ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արթուր Սերժիկի Թորոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իրավաբանական նշանակություն ունեցող, փաստ հավաստող, կեղծ փաստաթուղթ հանդիսացող դիպլոմը ներկայացրել է ՀՀ ԱՄՆ դեսպանատուն:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՄԱՆԿԱՏԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Լիլիթ Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար, ապա՝ տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ եւ ի պաշտոնն լիազորված լինելով տնօրինել կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, ինչպես նաեւ պատասխանատվություն կրելով հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք, մասնավորապես՝ առանց ստուգելու հաստատել է կազմակերպության հաշվապահի կողմից կազմված եւ իրականությանը չհամապատասխանող՝ կազմակերպության 2018 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսն ներառյալ ժամանակահատվածի, ինչպես նաեւ 2019 թվականի դեկտեմբեր ամսի ֆինանսական հաշվետվությունները, որի հետեւանքով անզգուշությամբ էական վնաս է պատճառել կազմակերպության եւ պետության օրինական շահերին, այն է՝ պետությանը պատճառվել է 3.256.390 ՀՀ դրամի, իսկ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը՝ 2.695.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

ԾԵԾԵԼ ԵՆ, ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ

Գիշերը թեժ իրավիճակ է եղել Նուբարաշեն վարչական շրջանի բնակարաններից մեկում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 4 հոգի գինովցել են ու սկսել են վիճել, որից հետո բանը հասել է դանակին:

Վիճաբանողներից մեկին ծեծել են ու դանակահարել, հարվածել են կրծքին, թոքն է վնասվել:

Մեզ հայտնի դարձավ, որ դեպքով զբաղվում են իրավապահները:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐԵՆՔ

ՀԱՇԻՎՆԵՐՆ ԱՐԳԵԼԱԴՐՎԵԼ ԵՆ

Լատվիայի քաղաքացի Կ.Ս.-ն, ներգրավված լինելով օտարերկրյա մի պետությունից մյուսը զենքի մատակարարումների գործընթացում, 2013-2020 թվականներն ընկած ժամանակահատվածում շրջանառել է հանցավոր ճանապարհով ստացված շուրջ 170 մլն 600 հազար ԱՄՆ դոլար:

Դատախազությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ քրեական վարույթի շրջանակում պարզվել է, որ Կ.Ս.-ն, վերոնշյալ ժամանակահատվածում զբաղվելով զենքի ապօրինի առեւտրով, իր գործունեությունից ստացված անօրինական եկամուտները շրջանառել է օֆշորային գոտիներում երրորդ անձանց անվամբ գրանցված, սակայն փաստացի իրեն պատկանող 4 ընկերությունների միջոցով:

Մասնավորապես, Կ.Ս.-ն, գիտակցելով օտարերկրյա մի պետությունից մյուսը զենք մատակարարելու գործարքի արդյունքում ստացված գումարների՝ հանցավոր ծագում ունենալու հանգամանքը, բանկում Օ.Պ.-ի միջոցով բացված, փաստացի իրեն պատկանող ընկերության հաշվեհամարներին է պահել այդ գումարները, իսկ 2014 թվականի մայիսից մինչեւ 2016 թվականի մայիսը տնօրինել, օգտագործել է դրանք, կատարել փոխակերպումներ եւ փոխանցումներ: Կ.Ս.-ն գումարները փոխանցել է թե՛ երրորդ անձանց, թե՛ փաստացի իրեն պատկանող ընկերությունների հաշվեհամարներին:

Դատախազը 2023 թվականի սեպտեմբերի 4-ին Կ.Ս.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ Կ.Ս.-ն իրականացրել է ապօրինի զենք մատակարարելու գործարքի արդյունքում ստացված, հանցավոր ծագում ունեցող 3 մլրդ 117 մլն 268 հազար 449 դրամին համարժեք 5 մլն 294 հազար 118 եվրո եւ 450 հազար 324,02 ԱՄՆ դոլարի փողերի լվացում:

Կ.Ս.-ին պատկանող ընկերության հաշվեհամարին առկա 6 մլն 578 հազար 224,97 ԱՄՆ դոլարն արգելադրվել է:

ԹԵԺ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեկ Շենգավիթ վարչական շրջանի՝ Գարեգին Նժդեհի հրապարակում՝ «Ղարսի խորոված» պատրաստողների մոտ, թեժ վիճաբանություն է տեղի ունեցել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքացիները նկատել են, թե ինչպես են խորոված պատրաստողները ծեծի ենթարկել մեկին, որը մարմնի տարբեր մասերի վնասվածքներով՝ սալջարդ, քերծվածքներ ախտորոշմամբ, տեղափոխվել է Էրեբունի բժշկական կենտրոն: Դեպքով զբաղվում են իրավապահները՝ հասկանալու համար, թե ինչու են խորոված պատրաստողները ծեծել տղամարդուն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 65 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Իջեւան համայնքի Վազաշեն գյուղից տեղեկացա, որ Վազաշենի հողերից շուրջ 1000 հեկտարը գտնվում է ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ, ադրբեջանցիները այդ հողերի մի մասում ամեն տարի ցորեն են ցանում: Այդ հողերը Ադրբեջանի վերահսկողության տակ են 30 տարի: Ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ են գտնվում նաեւ Իջեւան համայնքի Բերքաբեր, Նոյեմբերյան համայնքի Կոթի, Դովեղ, Բարեկամավան, Բերդավան, Բերդ համայնքի Մովսես եւ այլ գյուղերին պատկանող հողեր: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել, թե Տավուշի մարզից ընդհանուր ինչքան տարածք է գտնվում Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզի տարածքից ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող մակերեսի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ, համաձայն «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության պետական սահմանագծից դեպի Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը՝ մինչեւ հինգ կիլոմետր լայնությամբ, համարվում է սահմանային գոտի, իսկ պետական սահմանին կամ պետական սահմանը ջրային տարածքով անցնելիս սահմանային ջրերի ափերին՝ մինչեւ մեկ կիլոմետր լայնությամբ հարող սահմանային գոտու հատվածը, համարվում է սահմանային շերտ: Նշված տարածքները համարվում են հատուկ նշանակության հողեր: Համաձայն ՀՀ կառավարության «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» որոշման 1-ին կետի ժ) ենթակետի՝ հատուկ նշանակության հողերի օգտագործման սահմանափակումների եւ նորմերի սահմանման քաղաքականության մասով պետական լիազոր մարմիններ են սահմանվել ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը եւ ՀՀ պաշտպանության նախարարությունը: Հետեւաբար, առաջարկում եմ հարցի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար դիմել համապատասխան գերատեսչությանը»:

ՄԱՐԶՊԵՏՆ ՈՒ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Օգոստոսի 4-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը որոշել է ստեղծել Իջեւան համայնքում փողոցային առեւտրի ուսումնասիրման եւ կանխարգելման նպատակով հանձնաժողով: Նրան հարցադրում եմ արել՝ 2021թ.-ից Տավուշի մարզպետն է, մարզի այլ համայնքներում փողոցային առեւտուր չկա արդյոք, ինչու չի ստեղծել մարզի այլ համայնքներում փողոցային առեւտրի ուսումնասիրման եւ կանխարգելման նպատակով հանձնաժողովներ: Մարզպետը պատասխանել է. «Համաձայն «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին», «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքների՝ փողոցային առեւտուրը վերահսկվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Համայնքապետարանի հետ քննարկումների արդյունքում որոշվել է փողոցային առեւտրի խնդիրներն ուսումնասիրելու եւ կանխարգելելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով: Բացի Իջեւան համայնքից, մյուս համայնքների հետ խնդրի քննարկման ընթացքում նույնպես, եթե որոշվի, որ մարզային հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտություն կա, կկայացվի համապատասխան որոշում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՃԳՆԱԺԱՄԸ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանդիպմանը սեպտեմբերի 6-ին քննարկվել է Լաչինի միջանցքի արգելափակումը եւ հումանիտար ճգնաժամը Լեռնային Ղարաբաղում: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին տեղեկացնում են ԵԽ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչությունից:

Եվ գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչը Նախարարների կոմիտեին ներկայացրել է մայիս-հուլիսին ԵԽ բարձրաստիճան պատվիրակության՝ Հայաստան եւ Ադրբեջան կատարած այցերի արդյունքները:

Մի շարք պատվիրակություններ, այդ թվում՝ նաեւ Եվրոպական միության պատվիրակությունը, հանդես են եկել Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակի վերաբերյալ հայտարարություններով:

Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Արման Խաչատրյանը նշել է, որ Հայաստան այցի ընթացքում ԵԽ բարձրաստիճան պատվիրակությունը, մեկնելով Լաչինի միջանցքի սկզբնամաս, տեղում ականատես է դարձել Լաչինի միջանցքի ամբողջական արգելափակմանը: Ընդգծել է, որ Ադրբեջանն իր գործողություններով բացահայտ ի ցույց է դնում իր իրական նպատակը՝ Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների իրականացումը, ինչն անհամատեղելի է Ադրբեջանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցությամբ ստանձնած պարտավորությունների հետ:

Դեսպանը շեշտել է Լեռնային Ղարաբաղի լիակատար շրջափակման հետեւանքով ստեղծված հումանիտար եւ մարդու իրավունքների ճգնաժամը որպես առաջ կասեցնելու անհրաժեշտությունը: Հորդորել է Ադրբեջանին դադարեցնել շրջափակումը եւ լիարժեք կերպով կատարել Միջազգային արդարադատության դատարանի եւ ՄԻԵԴ իրավականորեն պարտադիր ուժ ունեցող որոշումները:

«Որպես առաջնային հրատապ քայլ՝ Եվրոպայի խորհուրդը պետք է փաստահավաք առաքելություն գործուղի Լաչինի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ: Փաստահավաք առաքելություն հայցվել է նաեւ Լաչինի միջանցքի վերաբերյալ ԵԽԽՎ բանաձեւում, իսկ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը հաստատել է պատրաստակամությունը մեկնելու Լեռնային Ղարաբաղ»,- նշել է դեսպան Խաչատրյանը:

Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքների եւ անվտանգության հարցերը պետք է լուծում գտնեն Բաքու-Ստեփանակերտ երկխոսության միջազգային մեխանիզմի շրջանակներում:

Նախարարների կոմիտեի օրակարգային մեկ այլ կետի ներքո քննարկվել է Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոյի՝ «Ցեղասպանություն հայերի դեմ 2023 թվականին» զեկույցը: ԵԽԽՎ պատգամավոր Պիետեր Օմցիգին գրավոր հարց էր ուղղել ԵԽ նախարարների կոմիտեին, թե ինչ քայլեր է ձեռնարկել նախարարների կոմիտեն՝ կանխարգելելու հայերի դեմ ցեղասպանության իրականացումը, եւ արդյոք առկա սպառնալիքը հետեւանքներ ունի ԵԽ անդամ Ադրբեջանի համար:

Դեսպան Խաչատրյանն անդրադարձել է Օկամպոյի զեկույցին եւ ներկայացրել է դրա եզրակացությունը, որ Լաչինի միջանցքի շրջափակումը պետք է դիտարկվի որպես ցեղասպանություն՝ համաձայն Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա համար պատժի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի:

Նա տեղեկացրել է, որ Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների եւ ցեղասպանության վտանգների վերաբերյալ առկա են նաեւ այլ հեղինակային կարծիքներ եւ զեկույցներ, ինչպես, օրինակ, ՄԱԿ գլխավոր քարտուղարի ցեղասպանության կանխարգելման հարցերով նախկին հատուկ խորհրդական Խուան Մենդեսի զեկույցը:

Դեսպանն ընդգծել է, որ Ադրբեջանի գործողությունները՝ ընդդեմ Լեռնային Ղարաբաղի, հակասում են ԵԽ սկզբունքներին եւ արժեքներին: Եվրոպայի խորհուրդը չի կարող անհետեւանք թողնել Ադրբեջանի անդամակցության եւ կոնվենցիոն պարտավորությունների ակներեւ խախտումները:

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի վիճակագրության կոմիտեից տեղեկանում է 2022-ի հոկտեմբերին Հայաստանում անցկացված մարդահամարի նախնական տվյալների մասին:

Ըստ այդմ՝ Հայաստանի մշտական բնակչությունը 2022 թվականին կազմել է 2 մլն 932 հազար 731 մարդ, մինչդեռ 2021-ին այն եղել է 3 մլն 018 հազար 854, իսկ 2020-ին՝ 3 մլն 213 հազար 011:

Հայաստանի առկա բնակչությունը 2022-ին կազմել է 2 մլն 689 հազար 438 մարդ, մինչդեռ 2021-ին այդ ցուցանիշը կազմել է 2 մլն 871 հազար 771, իսկ 2020-ին՝ 3 մլն 2 հազար 594 մարդ:

Նշենք, որ մշտական բնակչության թվաքանակում ներառված է ՀՀ-ում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա ու ժամանակավոր բացակա բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարը:

Հավելենք, որ առկա բնակչության թվաքանակում ներառված է ՀՀ-ում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա ու ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարը:

Վիճակագրական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցում են նաեւ, որ այս տարվա հունվար-հուլիսին Հայաստանում ծնվել է 20 111 մարդ, մահացել է 14 265 մարդ:

Նույն ժամանակահատվածում Հայաստանում գրանցվել է 9 156 ամուսնություն եւ 2 590 ամուսնալուծություն:

2023-ի հունվար-հուլիսին սահմանային անցակետերով Հայաստանից դուրս է եկել 2 606 902 մարդ, իսկ Հայաստան մուտք է գործել 2 645 161 մարդ: Դրական տարբերությունը կազմել է 38 259:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԵՑ

Սեպտեմբերի 1-ից 6-ը ՍԱՏՄ սահմանային վերահսկողության արդյունքում, լաբորատոր անհամապատասխանության հիմքով, արգելվել է ՀՀ ներմուծել հետեւյալ վտանգավոր սննդամթերքը.

- Բրազիլիայից թռչնամիս՝ 69900 կգ, որից 44400 կգ-ը՝ լիստերիա (Listeria monocytogenes) ցուցանիշով, իսկ 25500 կգ-ը՝ ախտածին մանրէներ, այդ թվում՝ սալմոնելաներ ցուցանիշով,
- Վրաստանից թռչնամիս՝ 505,2 կգ՝ ախտածին մանրէներ, այդ թվում՝ սալմոնելաներ ցուցանիշով:

Փաստաթղթային անհամապատասխանության հիմքով՝ արգելվել է ՀՀ ներմուծել.

- Վրաստանից (ծագման երկիրը՝ Ֆրանսիա) կաղնու տաշեղներ՝ գինեգործության մեջ օգտագործելու համար՝ 15 կգ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Արմավիրի մարզ, համայնք Մրգաշատ, 10 փողոց, 23 հասցեում գտնվող 654,3 քմ բնակելի տուն, 6,7 քմ խոհանոց, 15 քմ թոնրատուն, 6,5 քմ կաթսայատուն, 330 քմ ջերմոց, 31,5 քմ ծածկ, 31,6 քմ ծածկ եւ 0,3 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝37800000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 25.09.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է «Դրակո» ՍՊԸ-ի՝N- 1668/1, 25.12.2019 թվականի «Հարկային գրքույկը»: Գտնողներին խնդրում ենք զանգահարել 099107028 հեռախոսահամարով:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին ԿԳՄՆ-ից հայտնում են, որ նախարարի հրամանով հաստատվել է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը:

Երկարօրյա ուսուցումը կազմակերպվելու է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվելու են ծնողների դիմումի հիման վրա (վճարովի սկզբունքով) եւ միտված են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու: Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար երկարօրյա խմբում ծառայությունների մատուցումը կարող է կազմակերպվել անվճար:

Նշենք, որ 2023-2024 ուստարվանից հանրապետության բոլոր դպրոցներում, Հանրակրթության պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված, հանվել է բացասական գնահատականը, եւ ցածր առաջադիմությունը չի կարող հիմք հանդիսանալ ուսումնառությունը կրկնելու համար: Նոր կարգի համաձայն՝ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ծրագրային բացը, ըստ անհրաժեշտության, կլրացվի երկարօրյա պարապմունքների միջոցով:

Ուսումնառության ցածր արդյունքներ ունեցող սովորողների համար ծրագրային նյութի յուրացման ապահովման նպատակով հաստատություններին տրվելու է անհրաժեշտ ֆինանսավորում. ըրեւէ վճար ծնողի կողմից չի լինելու:

Հավելենք, որ, ծնողների դիմումի հիման վրա, կազմակերպվող երկարօրյա խմբերը ձեւավորվում են ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ մինչեւ սեպտեմբերի 10-ը, երկրորդ կիսամյակում՝ մինչեւ հունվարի 15-ը, եւ համալրվում են ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողներին ուսումնառության արդյունքները բարելավելու համար երկարօրյա խմբերը ձեւավորվում են ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ սկսած հոկտեմբերի 1-ից, երկրորդ կիսամյակում՝սկսած փետրվարի 1-ից, համալրվում են ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության: Սովորողի երկարօրյա պարապմունքները դադարեցվում են ուսումնական պլանով սահմանված առարկայի դասավանդման ժամանակ առաջադիմության դրական արդյունք արձանագրելու դեպքում:

Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողներին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով երկարօրյա խումբը կարող է ձեւավորվել նույն առարկայական ծրագիրն ուսումնասիրող դասարանների սովորողներից (մեկից ավելի դասարանների առկայության դեպքում):

Երկարօրյա պարապմունքները կարող են իրականացվել կրթական 1-ին աստիճանում (տարրական)՝ շաբաթական առավելագույնը 2 ժամ, կրթության 2-րդ աստիճանում (հիմնական)՝ շաբաթական առավելագույնը 3 ժամ:

Երկարօրյա խմբի պարապմունքներն անցկացնում է համապատասխան ուսումնական առարկան դասավանդող՝ տվյալ հաստատության որեւէ ուսուցիչ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՃՆ ՈՒ ԳՆԱՆԿՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 4.0%, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ 0.4% գնանկում:

ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, խոզի մսի գինը նվազել է 13.6%-ով, բրնձինը՝ 5.7%-ով, թռչնամսինը՝ 0.8%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ գրանցվել է 0.6%, 0.9% եւ 0.3% գնաճ:

Ալկոհոլային խմիչքի եւ ծխախոտային արտադրատեսակների գները 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, աճել են համապատասխանաբար 6.2% եւ 11.1%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ 0.2%-ով:

Դրան զուգընթաց, 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է ալյուրի 18.3%, մակարոնեղենի՝12.2%, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 2.4%, 1.2% գնանկում:

Հնդկացորենի գինը 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, նվազել է 28.4%-ով, ոսպինը՝ 22.6%-ով, ոլոռինը՝ 16.3%-ով, ճավարինը՝ 5.9%-ով, բլղուրինը՝ 5.4%-ով, հաճարինը՝ 5.1%-ով, լոբունը՝ 1.7%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 2.9%, 1.5%, 1.2% 1.2%, 0.2%, 1.0%, 0.3-ով:

Մարգարինի, «Իշխան» ձկնատեսակի եւ կարագի գները 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, նվազել են 16.3%, 4.7% եւ 3.9%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 2.7%, 0.3% եւ 0.8%-ով:

2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, արեւածաղկի բուսական յուղի գինը նվազել է 36.8%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝0.9%-ով:

Ըստ վիճակագրության՝ պանրի եւ տավար մսի գները 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, աճել են 0.1% եւ 2.9%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ հանրապետությունում գրանցվել 1.1% եւ 0.3% գնանկում:

2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, պահածոյացված կաթի գինը նվազել է 3.1%-ով, գառան մսինը՝2.6%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 1.1% եւ 0.6% -ով:

Շաքարի եւ շաքարավազի ապրանքախմբում 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, արձանագրվել է 4.7%, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝4.3% գնանկում:

2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, ձվի գինն աճել է 13.5%-ով, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝ արձանագրվել է 0.1% գնանկում:

Բանջարեղենի ապրանքախմբում 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ, արձանագրվել է 3.7% գնանկում, իսկ 2023թ. հուլիսի համեմատ՝3.0% գնաճ:

Մրգի ապրանքախմբում 2023թ. օգոստոսին, 2022թ. օգոստոսի համեմատ եւ 2023թ. հուլիսի համեմատ, արձանագրվել է 3.3% գնանկում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

«ԲԵՐԴ» ԱՆՍԱՄԲԼԻ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Բերդ» պարային անսամբլն այս տարի նշում է հիմնադրման 60-ամյակը, որն առանձնանում է տպավորիչ շրջագայություններով ու հյուրախաղերով: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Ժողովրդական արվեստների եւ ֆոլկլորային փառատոնների կազմակերպությունների միջազգային խորհրդի Ֆրանսիայի մասնաճյուղի հրավերով օրերս «Բերդ» պարային անսամբլը 30-հոգանոց խմբով 5 շաբաթ բազմաթիվ համերգներով հանդես է եկել Ֆրանսիայի տարբեր քաղաքներում:

«Բերդ» պարային անսամբլի տնօրեն Ստեփան Գեւորգյանը նշեց, որ մասնակցել են «Festival Montoire Internasional 2023»-ի շրջանակներում Ֆրանսիայի տարբեր քաղաքներում անցկացվող մի շարք փառատոնների: Մասնակցել են ավելի քան 40 երկիր ներկայացնող պարային համույթներ, ժողովրդական կոլեկտիվներ:

«Գլխավոր միջոցառման բացման հանդիսավոր արարողությունը վստահված էր «Բերդ» պարային անսամբլին: Բացումը կատարեց Հայաստանը, փակումը՝Արգենտինան: Նշեմ, որ զուգահեռաբար «Բերդ» պարային անսամբլը հանդես եկավ բազմաթիվ մենահամերգներով: Ասեմ, որ փառատոնների շրջանակում մեկ օրը նվիրվեց հայկական դուդուկին: Ոչ միայն դուդուկի կատարումներ եղան, այլեւ ներկայացվեց այս հրաշք երաժշտական գործիքի պատմությունը, անցած ուղին: Շատ տպավորված ենք, հանդիսատեսը մեծ ոգեւորությամբ ընդունեց «Բերդ» պարային անսամբլի արտիստներին»,-ասաց Ստեփան Գեւորգյանը:

«Բերդ» պարային անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Կարեն Գեւորգյանը նշեց, որ 2016 թվականին եւս հյուրընկալվել էին այս փառատոնին, եւ այս անգամ ներկա էին մարդիկ, որոնք հիշում էին այդ ժամանակ հայ արտիստների ելույթը ու մեծ ոգեւորությամբ սպասում էին՝ կրկին վայելելու հայկական պարը, մշակույթը:

«Այստեղ կարեւոր է ոչ միայն հայկական մշակույթը տարածելը, այլեւ այդ մշակույթով մեր երկիրը սիրելի դարձնելը: Մեր արտիստները հրաշալի գործ արեցին: Հինգ շաբաթվա ընթացքում առաջին հայացքից հեշտ, բայց իրականում շատ դժվար ու ծավալուն աշխատանք կատարվեց մեր պարողների կողմից, ինչի համար շնորհակալ եմ»,-ասաց Կարեն Գեւորգյանը:

Հավելենք, որ «Բերդ» պարային անսամբլն այս 60 տարիներ ընթացքում կառուցել է ամրակուռ մի այնպիսի պարիսպ, որից ներս են մտել հազարավոր սաներ: Նրանցից շատերն իրենց մեծ ներդրումն են ունեցել հայկական մշակույթի տարածման գործում: Առաջիկայում անսամբլը կրկին պատրաստվում է համերգների: Նախ՝ հոկտեմբերի սկզբին երեւանյան համերգն է, այնուհետեւ պարային խումբը մեկնում է հյուրախաղերի ԱՄՆ, Բուլղարիա, Ֆրանսիա, եվրոպական այլ երկրներ:

ՊԵՂՈՒՄՆԵՐ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է ՓԱՐՊԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ վերականգնվելու է ՀՀ Արագածոտնի մարզի Փարպիի Ծիրանավոր եկեղեցին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԿԳՄՍՆ աշխատակիցները հերթական այցն են կատարել մարզ եկեղեցու վերականգնման աշխատանքները սկսելու, տեղում կապալառուի, տեխնիկական եւ հեղինակային հսկողության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպելու նպատակով:

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցու ամրակայման, վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռք բերման բաց մրցույթը հայտարարվել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մի քանի անգամ: Երրորդ անգամ հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Հարսնաձոր» ՍՊԸ-ի հետ կնքվել է պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր, որի շրջանակներում նախատեսվում է միչեւ 2025 թ. ավարտել հուշարձանի վերականգնողական աշխատանքները: Այցի նպատակն էր իրականացնել կապալառու կազմակերպության հանդիպումը որակի տեխնիկական եւ հեղինակային հսկողությունն իրականացնող կազմակերպությունների հետ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը քաղաքաշինական նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան շինհրապարակը պատշաճ կերպով կազմակերպման համար: Առաջիկա օրերին կկատարվի տարածքի սահմանազատում եւ շինհրապարակի կահավորում, որից հետո կսկսվեն աշխատանքները:

Նշենք, որ հաջորդ այցելված հուշարձանը Ոսկեհատի դամբարանադաշտն էր, որտեղ արդեն մի քանի ամիս պեղումներ է իրականացնում «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախումբը: Աշխատանքային խումբը ծանոթացել է պեղումների ընթացքին եւ արդյունքներին:

Այցի վերջին կանգառը ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի Ծիրանավոր եկեղեցին էր, որի արեւմտյան պատի մի հատված փլուզվել էր մոտ մեկ ամիս առաջ: Նախատեսվում է հրատապ վերականգնել փլուզված հատվածը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի միջոցներով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԸ

Goal.com-ը ներկայացրել է այս տարվա աշխարհի լավագույն ֆուտբոլիստի «Ոսկե գնդակ» մրցանակի հավակնորդների տասնյակը:

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսին պահպանել է առաջին տեղը:

1. Լիոնել Մեսի (ՊՍԺ / «Ինտեր Մայամի»)
2. Էրլինգ Հոլանդ («Մանչեսթեր Սիթի»)
3. Կիլիան Մբապե (ՊՍԺ)
4. Վինիսիուս Ժունիոր («Ռեալ Մադրիդ»)
5. Կեւին Դե Բրույնե («Մանչեսթեր Սիթի»)
6. Ռոդրի («Մանչեսթեր Սիթի»)
7. Իլկայ Գյունդոգան («Մանչեսթեր Սիթի» / «Բարսելոնա»)
8. Վիկտոր Օսիմեն («Նապոլի»)
9. Խուլիան Ալվարես («Մանչեսթեր Սիթի»)
10. Ռոբերտ Լեւանդովսկի («Բարսելոնա»)

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՎԱՃԱՌԵԼ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» բաժնետոմսերը մեկ օրում էժանացել են 21 տոկոսով: Սա ամենամեծ անկումն է 11 տարում: Պատճառը ակումբի ամերիկացի սեփականատեր Գլեյզերների ընտանիքի որոշումն է հրաժարվել ակումբն ամբողջությամբ կամ մասնակի վաճառելու նպատակից. հաղորդում է Bloomberg-ը:

«Մանչեսթեր Յունայթեդի» շուկայական կապիտալիզացիան կրճատվել է 700 միլիոն դոլարով եւ այժմ գնահատվում է 3,9 միլիարդ դոլար:

ՃԱՆԱՉՎԵՑ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

Ֆուտբոլի Անգլիայի ազգային հավաքականում երկրորդ տարին անընդմեջ տարվա լավագույն ֆուտբոլիստ ճանաչվեց Լոնդոնի «Արսենալի» 22-ամյա հարձակվող Բուկայո Սական. հաղորդում է թիմի թվիթերյան էջը:

Քվեարկությունում նա առաջ է անցել Դորտմունդի «Բորուսիայից» Մադրիդի «Ռեալ» տեղափոխված կիսապաշտպան Ջուդ Բելինգեմից եւ Լոնդոնի «Տոտենհեմից» Մյունխենի «Բավարիա» տեղափոխված Հարի Քեյնից:

Մրցանակը ստացել է ծննդյան օրը՝ սեպտեմբերի 5-ին:

ԱՄԲՈՂՋ ԿԱԶՄՈՎ

ՀՖՖ տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում մարզական հավաք անցկացնող Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն արդեն մարզվում է ամբողջական կազմով. հաղորդում է ՀՖՖ-ի մամուլի ծառայությունը: Ուկրաինացի Ալեքսանդր Պետրակովի գլխավորած թիմը պատրաստվում է «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի առաջիկա հանդիպումներին:

Սեպտեմբերի 8-ին Հայաստանի հավաքականը կհյուրընկալվի Թուրքիայի թիմին, սեպտեմբերի 11-ին կընդունի խորվաթներին:

● *Սեպտեմբերի 12-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Գարեգին Նժդեհ. իրական առասպել» պատմական հետազոտությունը: Տոմսերի արժեքը՝2500-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ արագ դադարեցնել տրանսպորտային միջոցի նկատմամբ հայտարարված հետախուզումը:

Սեյրան Մուրադյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հետախուզումն արագ դադարեցնելու միակ եղանակը հարկադիր կատարման ենթակա ակտը եւ հարկադիր կատարողի որոշումը կամավոր կատարելն է:

Եթե ունեք վճարային պարտավորություն, կատարե՛ք այն հետեւյալ եղանակներից մեկով՝

- առցանց՝ անմիջապես «Անձնական գրասենյակ»-ից,
- մոտակա վճարահաշվարկային տերմինալով,
- քաղաքացիական կենտրոններից կամ Հայփոստի գրասենյակներից մեկում,
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում:

Պարտավորությունը նշված եղանակներից մեկով կատարելու դեպքում Ձեր նկատմամբ հարուցված կատարողական վարույթը կկարճվի, իսկ տրանսպորտային միջոցի նկատմամբ հայտարարված հետախուզումը կդադարեցվի ինքնաշխատ ոչ ուշ, քան մինչեւ տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե Ձեր պարտավորությունը վճարային չէ, անհապաղ կապ հաստատե՛ք ծառայության հետ էլեկտրոնային հարցումների e-request.am միասնական հարթակի միջոցով, զանգահարելով ծառայության Թեժ գծի 88-19 հեռախոսահամարով կամ պարզապես այցելելով ծառայություն կամ համապատասխան տարածքային ստորաբաժանում:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պատասխանատվություն է սահմանված հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար:

Նարեկ Սեւոյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն, այն է՝

հիմնարկներում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում եւ բնակելի տներում, ինչպես նաեւ համապատասխան օբյեկտներ նախագծելիս եւ կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելը կամ չկատարելը կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու եւ հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից հինսապատիկի չափով:

Վերոնշյալ հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում նշված խախտումները վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկից հարյուրհինսապատիկի չափով:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չվերացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինսապատիկի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ներկայացուցիչները 2 ոսկե եւ 1 բրոնզե մեդալ են նվաճել Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում մեկնարկած խուլերի ըմբշամարտի մեծահասակների, երիտասարդների եւ պատանիների աշխարհի առաջնությունում:

Մեծահասակների պայքարում հաղթողի կոչմանն արժանացել է Սենիկ Սերոբյանը: Պատանիների պայքարում ոսկե մեդալին արժանացել ու պատվո հարթակի առաջին աստիճանին է կանգնել հունահռոմեական ոճի ըմբիշ, 50 կգ քաշային Արման Ասատրյանը, իսկ 55 կգ քաշային Գեւորգ Սողոյանը դարձել է բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 12 +23 + 27
Կոտայքի լեռներ	+ 9 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+19 + 21 +28 + 32
Գեղարքունիք	+ 10 + 14 +22 + 26
Լոռի	+13 + 17 +20 + 24
Տավուշ	+14 + 19 +24 + 27
Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 +22 + 26
Արագածոտնի նախալեռներ	+18 + 20 + 30 + 34

Արարատ	+18 + 20 +34 + 36
Արմավիր	+15 + 19 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +25 + 28
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +33 + 36
Սյունիքի հովիտներ	+19 + 21 +27 + 31
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 15 +19 + 22
ԼՂՀ	+18 + 21 +26 + 31
Երեւան	+ 19 + 21 +35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.9.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*